ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2

Հայտերի գնահատման նիստի

Շամբ ՀԷԿ-ում լրացուցիչ մեխանիկական պաշտպանություն գերարագությունից (թափառքից) նախագծման, տեղադրման և շահագործման հանձնման համար
ստացված տեխնիկական հայտերի գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 19/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. փետրվարի 6-ին, Ժամը՝ 16:00-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան Գավրուշա Աթայան Արտաշես Գրիգորյան Սևակ Սուրենյան Սահակ Մկրտչյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին և համաձայն մրցութային փաթեթի 6.3 կետի պահանջների առաջարկել էր մինչև 2026թ փետրվարի 5-ը պահանջել «Քոնտեխ» ՍՊ ընկերությունից պարզաբանել հայտում ներկայացված տեղեկատվությունը և ստացված պարզաբանումների արդյունքում հանձնաժողովը հայտերը վերջնական գնահատել է հետևյալ կերպ:
2. Ներկայացված Voith Hydro GmbH & Co. KG և «Քոնտեխ» ՍՊԸ կազմակերպությունների կողմից հայտերը բավարարում են մրցութային փաթեթի

որակավորման պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես. հայտատուների վերջին տարվա սեփական կապիտալը դրական է, վերջին 5 (հինգ) տարիների միջին տարեկան հասույթը (շրջանառությունը) գերազանցում է 80,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ, ինչպես նաև ներկայացվել է մեկ պայմանագիր, ոչ պակաս քան 25,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ նմանատիպ սարքավորման մատակարարման և/կամ նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի հետ կապված:

3. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ երկու հայտերը բավարարում են որակավորման չափանիշներին և տեխնիկական պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց հրավիրել հայտատուներին ֆինանսական առաջարկի բացման հեռահար նիստին և բացել ֆինանսական առաջարկները ս.թ. փետրվարի 9-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	
	Գավրուշա Աթայան	
	Արտաշես Գրիգորյան	
	Սևակ Սուրենյան	
	Սահակ Մկրտչյան	
	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	